Դաս 15. Ավանդապատումներ՝ տեղանքի հետ կապված (Ծիծեռնակաբերդ, Հաղպատ, Զանգեզուր, Ծաղկաձոր)

Պահպանվել են նաև Զանգեզուր անվան հետ հապված այլ ավանդապատումներ:

***

Որոտանի ձորում շատ գյուղեր են եղել, ամեն գյուղում էլ՝ մեկ-երկու եկեղեցի: Առավոտները, որ զանգերը տվել են, ձորը լցվել է նրանց ձայնով: Լսողներն ասել են. «Զանգի ձո՛ր է, զանգի ձո՛ր է»: Դրանից հետո գավառի անունը դրել են Զանգեձոր, որը բերնե-բերան անցնելով՝ դարձել է Զանգեզուր:

***

Տաթևի վանքը կառուցելուց հետո զանգակատանը մի մեծ զանգ են կախել: Սրա ձայնն այնքան ուժեղ է եղել, որ երբ ղողանջել է, լսվել է ամբողջ գավառի լեռներում ու ձորերում: Ժողովուրդն ասել է. «Էս ի՞նչ զոռ զանգ է, զանգը զո՛ռ է»,- որից և առաջ է եկել Զանգըզոռ կամ Զանգեզուր անունը: